



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ՄԵՖԻԼՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգատ թիվ 22491/08)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

2 հոկտեմբերի 2012 թ.

ՎԵՐՋՆԱԿԱՆ

02/01/2013

Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն:

Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:



Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երրորդ բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Ջուսելի Կասադելլայ [Josep Casadevall]՝ *Նախագահ,*

Էլսբերտ Մայեր [Egbert Myjer],

Կորնելիու Բիրսան [Corneliu Bîrsan],

Ալվինա Գյուլումյան [Alvina Gyulumyan],

Յան Շիկուտա [Ján Sikuta],

Լուիս Լոպես Գեռա [Luis López Guerra],

Նոնա Ցոցորիա [Nona Tsotsoria]՝ *դատավորներ,*

եւ Սանտիագո Կեսադա [Santiago Quesada]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

2012 թվականի սեպտեմբերի 11-ին անցկացնելով դռնփակ
խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար
ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ
հոդվածի համաձայն Լիբանանի քաղաքացի պրն Ժիրայր Սեֆիլյանի (դիմումատու)
կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2007 թվականի մայիսի 11-ին
Դատարան ներկայացված գանգատի (թիվ 22491/08) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել են Երեւանում գործող իրավաբաններ
պրն Վ. Գրիգորյանը եւ պրն Ա. Զաքարյանը: Հայաստանի Հանրապետության
կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների
եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության
լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուն պնդել է, մասնավորապես, որ 2007 թվականի հունիսի 10-ից 22-ն ընկած ժամանակահատվածում իր կալանքը եղել է ոչ իրավաչափ, դատարանները չեն ներկայացրել շարունակական կալանքը հիմնավորող պատճառներ, Համայնքների դատարանում (Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան) 2007 թվականի փետրվարի 7-ի դատավարությունը չի եղել մրցակցային, ինքը զրկված է եղել 2007 թվականի մայիսի 14-ին Վերաքննիչ դատարանում կայացած բանավոր դատաքննությանը մասնակցելու հնարավորությունից, եւ իր հեռախոսային խոսակցությունների գաղտնի վերահսկումը եղել է անօրինական եւ անհամաչափ:

4. 2010 թվականի հունվարի 7-ին գանգատն ուղարկվել է Կառավարություն: Որոշվել է նաեւ միեւնոյն ժամանակ ուսումնասիրել գանգատի ընդունելիության եւ ըստ էության քննության հարցերը (29-րդ հոդվածի 1-ին կետ):

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1967 թվականին եւ ապրում է Երեւանում:

6. Դիմումատուն քաղաքացիական հասարակության ակտիվ անդամ է եւ առաջատար պաշտոններ է զբաղեցնում մի շարք հասարակական կազմակերպություններում, այդ թվում՝ «Հայ կամավորների միությունում», «Ազատագրված տարածքների պաշտպանություն» նախաձեռնությունում եւ «Արաքս-Կուր» վերաբնակեցման եւ զարգացման հիմնադրամում: Դիմումատուն ծագումով հայ է եւ 1992 թվականից ի վեր ակնհայտորեն մշտապես բնակվել է Հայաստանում, որտեղ ունի ընտանիք եւ բնակարան:

Ա. Դիմումատուի հեռախոսային խոսակցությունների գաղտնի վերահսկումը

7. Ինչպես երևում է, դիմումատուն Հայաստանի իշխանություններին քննադատող անձ է: Դիմումատուի պնդմամբ՝ այս կապակցությամբ նրան մի քանի անգամ կանչել են Ազգային անվտանգության ծառայություն (ԱԱԾ), որտեղ նրան կարգադրել են դադարեցնել ընդդիմության հետ իր համագործակցությունը եւ կառավարությանն ուղղված քննադատությունները:

8. Չպարզված օրը ԱԱԾ սահմանադրական կարգի պահպանության եւ ահաբեկչության դեմ պայքարի գլխավոր վարչության պետը միջնորդություն է ներկայացրել՝ դիմումատուի հեռախոսային խոսակցությունների եւ այլ հաղորդումների գաղտնի վերահսկում եւ ձայնագրություն իրականացնելու նպատակով:

9. 2006 թվականի օգոստոսի 15-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը քննել է միջնորդությունը եւ որոշել.

«Դատարան ներկայացված նյութերից եւ միջնորդությունից ակնհայտ է, որ ԱԱԾ սահմանադրական կարգի պահպանության եւ ահաբեկչության դեմ պայքարի գլխավոր վարչությունն ունի բավարար հիմքեր ենթադրելու, որ [դիմումատուն], ծնված 1967 թվականին Լիբանանում, Լիբանանի քաղաքացի, Երեւան քաղաքի Լեփսիուսի 17-րդ փողոց, բն. 42 հասցեում բնակվող «Հայ կամավորների միության» առաջնորդն իրականացնում է գործունեություն, որն ուղղված է Հայաստանում ներքին քաղաքական իրադրությունն ապակայունացնելուն եւ քաղաքացիական անհնազանդության մթնոլորտ ստեղծելուն՝ այսպիսով հող նախապատրաստելով հակասահմանադրական միջոցներով Հայաստանում կառավարության փոփոխության համար՝ հրապարակային կոչեր անելով»:

10. Համայնքների դատարանը որոշել է բավարարել դիմումատուի երեք բջջային եւ երեք ֆիքսված հեռախոսային ցանցերից ելքագրվող եւ մուտքագրվող հեռախոսային խոսակցությունները եւ այլ հաղորդումներ վեց ամիս ժամկետով գաղտնալսելու եւ ձայնագրելու մասին միջնորդությունը՝ հաշվի առնելով այն, որ դրանք կարող են պարունակել վերոնշյալ փաստական հանգամանքները

հիմնավորող այնպիսի տեղեկություններ, որոնց օգտագործումը դուրսին կդարձնի հանցագործության բացահայտումը եւ ապացույցների ձեռք բերումը, քանի որ դիմումատուի գործողություններում առկա են Քրեական օրենսգրքի (ՔՕ) 301-րդ հոդվածով սահմանված հանցագործության տարրեր: Համայնքների դատարանը հղում է կատարել, *inter alia* (ի թիվս այլնի), Քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 281-րդ եւ 284-րդ հոդվածներին:

Բ. Դիմումատուի դեմ հարուցված քրեական գործով վարույթը եւ նրան կալանավորելը

11. 2006 թվականի դեկտեմբերի 2-ին դիմումատուն ելույթ է ունեցել «Հայ կամավորների միության» կողմից կազմակերպված հավաքի ժամանակ: Հավաքը տեղի է ունեցել Երեւանի պարարվեստի պետական քոլեջի դահլիճում, որին մասնակցել է մոտ հարյուր հիսուն մարդ: Դիմումատուն կոչ է արել հավաքի մասնակիցներին լինել կազմակերպված, այլապես ոչինչ չի ստացվի: Բավարար չէ շարունակ կրկնել, որ նախագահին ու վարչապետը հրաժարական տան. նրանք երբեք հրաժարական չեն տա: Խաղաղ հավաքները չեն կարող ստիպել նրանց, որ հրաժարական տան: Եվ ո՛չ էլ արտաքին ճնշումները: Նա կոչ է արել մասնակիցներին ստեղծել մի հզոր ուժ, որպեսզի ստիպեն իշխանություններին հրաժարական տալ՝ նշելով, որ հիմնական եւ միակ նպատակը նրանցից ազատվելն է: Այնուհետեւ նա շեշտել է, որ նրանք չպետք է թույլ տան իշխանության գլուխ կանգնածներին շատանալ, քանի որ, հակառակ դեպքում, հավաքի մասնակիցների ապագա ծրագրերը լուրջ խոչընդոտների կբխվեն: Դիմումատուն իշխանություններին անվանել է «հրեշներ», որոնք կդառնան է՛լ ավելի վտանգավոր, եթե նրանց թույլ տան շատանալ: Դիմումատուն համակարծիք է եղել մյուս ելույթ ունեցողների հետ այն առումով, որ նպատակին հասնելու համար ընդունելի է ցանկացած միջոց:

12. 2006 թվականի դեկտեմբերի 8-ին Ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունը որոշում է կայացրել ՔՕ-ի 301-րդ հոդվածով

քրեական վարույթ հարուցելու մասին՝ վերոնշյալ հավաքի ժամանակ հնչած ելույթներում պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչեր անելու փաստի առթիվ:

13. 2006 թվականի դեկտեմբերի 9-ին՝ ժամը 22:30-ին, դիմումատուն ձերբակալվել է և տարվել է ԱԱԾ:

14. Նույն օրը խուզարկվել է դիմումատուի գրասենյակը, որի արդյունքում հայտնաբերվել է մեկ ատրճանակ և տարբեր տեսակի փամփուշտներ:

15. 2006 թվականի դեկտեմբերի 10-ին՝ ժամը 15:45-ին, կազմվել է ձերբակալման արձանագրությունը: Արձանագրության մեջ նշվել է, որ դիմումատուն կասկածվում է ՔՕ-ի 235-րդ հոդվածի 1-ին մասով և 301-րդ հոդվածով նախատեսված հանցանքների կատարման մեջ: Պարզվում է, որ դիմումատուի անձնագիրն առգրավվել է:

16. Նույն օրը դիմումատուն հարցաքննվել է որպես կասկածյալ: Նա հրաժարվել է ցուցմունք տալ՝ նշելով, որ իր դեմ քրեական գործ է հարուցվել քաղաքական շարժառիթներով:

17. 2006 թվականի դեկտեմբերի 12-ին դիմումատուին պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել ՔՕ-ի 235-րդ հոդվածի 1-ին մասով և 301-րդ հոդվածով: Նա մեղադրվել է պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչեր անելու և 1998 թվականին իր դեմոֆիլիզացիայից հետո իր զենքն ապօրինաբար պահելու և չհանձնելու մեջ: Դիմումատուի հետ ՔՕ-ի 301-րդ հոդվածով մեղադրվել է նաև մեկ այլ անձ՝ Վ.Մ.-ն, որը նույնպես ելույթ է ունեցել վերոնշյալ հավաքի ժամանակ: Նրանց ելույթները ձայնագրված են եղել:

18. Նույն օրը քննիչը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարան՝ դիմումատուին երկամսյա ժամկետով կալանավորելու մասին՝ հիմնավորելով, որ դիմումատուն, ազատության մեջ մնալով, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից և խոչընդոտել նախաքննության իրականացմանը: Պարզվում է, որ նույն

օրը Խորհրդարանի երեք անդամներ դիմում են ներկայացրել Համայնքների դատարան, որում իրենց անձնական երաշխավորությունն են տվել դիմումատուի պատշաճ վարքագծի համար՝ միջնորդելով, որ կալանավորում չկիրառվի:

19. Նույն օրը Համայնքների դատարանը քննել է քննիչի կողմից ներկայացված միջնորդությունը, ներառյալ մեղադրանքը եւ դրան առնչվող հանգամանքները: Համայնքների դատարանը որոշել է բավարարել միջնորդությունը՝ հաշվի առնելով մեղսագրվող արարքի բնույթը եւ վտանգավորության աստիճանը, այն հանգամանքը, որ մեղսագրվող արարքը պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների ցանկում առաջին տեղում է, ինչպես նաեւ համարելով, որ գործի նյութերը բավարար հիմքեր են տալիս ենթադրելու, որ դիմումատուն կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից եւ խոչընդոտել գործի քննությանը՝ ապօրինի ազդեցություն գործադրելով վարույթում ներգրավված անձանց վրա:

20. 2006 թվականի դեկտեմբերի 19-ին դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ պատճառաբանելով, *inter alia*, որ իր կողմից հանցանք կատարելու վերաբերյալ չկան հիմնավոր կասկածներ, եւ որ Համայնքների դատարանը չի ներկայացրել այն պատճառները, որոնք կհիմնավորեին իրեն կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը: Նա նշել է, մասնավորապես, որ նախաքննության մարմնի տրամադրության տակ է գտնվում իր ելույթի ձայնագրությունը, ուստի այն պնդումը, որ դիմումատուն կարող էր ապօրինի ազդեցություն գործադրել վկաների վրա, անհիմն է: Ավելին, պնդումն այն մասին, որ ինքը կարող էր թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, հիմնավորված չի եղել որեւէ փաստարկով կամ ապացույցով, մինչդեռ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ինքը մշտապես բնակվում է Հայաստանում եւ իր խնամքին ունի երկու անչափահաս երեխա եւ մեծահասակ մայր, որը վատառողջ է:

21. 2006 թվականի դեկտեմբերի 27-ին Քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանը մերժել է դիմումատուի վերաքննիչ բողոքը: Դիմումատուի՝ հիմնավոր կասկածի բացակայության վերաբերյալ փաստարկը մերժելիս Վերաքննիչ դատարանը գտել է, որ դիմումատուի մասնակցությունը մեղսագրվող արարքներին, որոնք պարունակում են ՔՕ-ի 235-րդ հոդվածի 1-ին մասով եւ 301-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ, հիմնավորվել են այնպիսի ապացույցներով, ինչպիսիք են տարբեր արձանագրությունները եւ փորձագիտական եզրակացությունները, որոնք կազմվել են քննիչի կողմից եւ ուսումնասիրվել դատարանում: Ինչ վերաբերում է Համայնքների դատարանի կողմից ներկայացված պատճառաբանություններին, Վերաքննիչ դատարանը համարել է, որ դրանք հիմնավորված են:

22. Նույն օրը դիմումատուն ներկայացրել է գրավի դիմաց ազատ արձակվելու մասին միջնորդություն: Նա նշել է, որ իր անձը հայտնի է նախաքննության մարմնին եւ դատարանին, ինքն ունի բնակության հստակ եւ կոնկրետ վայր եւ երբեք թաքնվելու փորձ չի արել: Դիմումատուն խնդրել է դատարանին սահմանել գրավի չափը:

23. 2007 թվականի դեկտեմբերի 30-ին մեկ այլ անձի՝ Վ.Ա.-ին, որը դիմումատուի ընկերն է, նույնպես նույն քրեական գործով վարույթի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել ՔՕ-ի 235-րդ հոդվածի 1- ին մասով՝ ապօրինի կերպով զենք եւ ռազմամթերք պահելու համար:

24. 2007 թվականի հունվարի 7-ին Համայնքների դատարանը մերժել է դիմումատուի՝ գրավի դիմաց ազատ արձակվելու պահանջը՝ հղում կատարելով վերջինիս կալանքը հիմնավորող նույն հիմքերին:

25. 2007 թվականի հունվարի 22-ին Վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել այդ որոշումը՝ ավելացնելով, որ դիմումատուն օտարերկրյա քաղաքացի է եւ, հետեւաբար, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից: Ավելին, անթույլատրելի էր դիմումատուին ազատ արձակել գրավի դիմաց՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույն գործով մեղադրվող մեկ այլ անձ՝ Վ.Ա.-ն,

որին նույնպես մեղադրանք էր առաջադրվել ապօրինի կերպով զենք եւ ռազմամթերք պահելու համար, գտնվում էր կալանքի տակ:

Գ. Ղիմումատուի կալանքի ժամկետի երկարացումը եւ վարույթը դատարանում

26. 2007 թվականի փետրվարի 1-ին քննիչը միջնորդություն է ներկայացրել Համայնքների դատարան՝ Ղիմումատուի կալանքի ժամկետը, որը լրանում էր 2007 թվականի փետրվարի 10-ին, երկու ամսով երկարաձգելու մասին: Քննիչը պնդել է, որ Ղիմումատուն կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, քանի որ օտարերկրյա քաղաքացի է: Նա նաեւ պնդել է, որ 2007 թվականի հունվարի 15-ին Ղիմումատուն իր պաշտպանի միջոցով կարճ երկտող է փոխանցել նույն գործով մեղադրվող Վ.Ա.-ին, որում ասվում էր՝ «պինդ կաց»: Սրանից ենթադրվում էր, որ Ղիմումատուն փորձել է ապօրինի ազդեցություն գործադրել վարույթի մասնակիցների վրա:

27. 2007 թվականի փետրվարի 7-ին Համայնքների դատարանը, ուսումնասիրելով քննիչի միջնորդությունը եւ այլ նյութեր, բավարարել է այդ միջնորդությունը՝ համարելով, որ հետագա քննչական գործողություններ իրականացնելու անհրաժեշտություն կա, եւ հղում է կատարել այն նույն հիմքերին, որոնցով նախկինում հիմնավորել էր Ղիմումատուին կալանքի տակ պահել շարունակելը:

28. 2007 թվականի փետրվարի 8-ին Ղիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել: Իր բողոքում նա պատճառաբանել է, *inter alia*, որ իր կալանքի ժամկետի երկարաձգումն իրականացվել է ՔԴՕ-ի 139-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետների խախտումով:

29. 2007 թվականի փետրվարի 23-ին Վերաքննիչ դատարանը մերժել է վերաքննիչ բողոքը՝ գտնելով, որ Համայնքների դատարանը, հաշվի առնելով քննիչի կողմից ներկայացված միջնորդության մեջ նշված հանգամանքները, կայացրել է պատճառաբանված որոշում, քանի որ դիմումատուին կալանավորելու հիմքերի առկայությունը չի դադարել: Ինչ վերաբերում է ժամկետները խախտելուն, Վերաքննիչ դատարանն այն չի համարել այնպիսի լուրջ խախտում, որը կարող էր ազդել քննիչի ներկայացրած միջնորդության քննության արդյունքում ճիշտ որոշման հանգեցնելու վրա:

30. 2007 թվականի մարտի 30-ին քննիչը միջնորդություն է ներկայացրել Համայնքների դատարան՝ դիմումատուի կալանքի ժամկետը, որը լրանում էր 2007 թվականի ապրիլի 10-ին, նույն հիմքերով երկու ամսով երկարաձգելու համար:

31. 2007 թվականի ապրիլի 4-ին Համայնքների դատարանը քննել էլ բավարարել է այդ միջնորդությունը նույն հիմքերով: Համայնքների դատարանում դատական նիստի ընթացքում դիմումատուի պաշտպանը հարցրել է դատարանին, թե արդյոք քննիչն ի հիմնավորում իր կողմից ներկայացված միջնորդության որեւէ ապացույց ներկայացրել է, որը կարող էր ուսումնասիրվել դատարանում: Նախագահող դատավորը պատասխանել է, որ քրեական գործի՝ միջնորդության հետ կապված նյութերը քննիչը ներկայացրել է իր կողմից ներկայացված նախորդ միջնորդության քննության ժամանակ: Դատարանը ուսումնասիրել էլ վերադարձրել է այդ նյութերը: Քրեական դատավարության օրենսգրքի նորմերի համաձայն՝ մինչև նախաքննության ավարտը պաշտպաններին չի թույլատրվում ծանոթանալ քրեական գործի նյութերին:

32. Այդ հայտարարությունից հետո դիմումատուի պաշտպանն ինքնաբացարկի միջնորդություն է ներկայացրել դատավորին՝ նրա կանխակալության հիմքով, *inter alia*, այն հիմքով, որ դատավորը նախորդ դատական նիստերի ժամանակ պաշտպանության կողմին չի ծանոթացրել տվյալ նյութերին: Դատավորը մերժել է ինքնաբացարկի միջնորդությունը՝ հղում անելով, *inter alia*, ՔԴՕ-ի 73-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետին:

33. 2007 թվականի ապրիլի 19-ին դիմումատուն վերաքննիչ բողոք է

ներկայացրել՝ վկայակոչելով նախկինում հնչեցրած փաստարկները:

34. Դիմումատուն պնդել է, որ իր պաշտպանները չեն ծանուցվել իր կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննության [տեղի եւ ժամանակի] մասին եւ այդ իսկ պատճառով չեն կարողացել ներկայանալ դատական նիստին:

35. Կառավարությունը վիճարկել է այդ պնդումը եւ հայտարարել, որ 2007 թվականի մայիսի 11-ին Վերաքննիչ դատարանը ծանուցագրեր է ուղարկել եւ՝ Գլխավոր դատախազություն, եւ՝ դիմումատուի պաշտպաններին, որոնք ստացել են այդ ծանուցագրերը եւ տեղեկացվել դիմումատուի վերաքննիչ բողոքի վերաբերյալ 2007 թվականի մայիսի 14-ին նշանակված դատական նիստի մասին:

36. 2007 թվականի մայիսի 14-ին դիմումատուի պաշտպանները ինքնաբացարկի միջնորդություն են ներկայացրել Վերաքննիչ դատարանի նախագահին՝ վիճարկելով բողոքի քննության համար նշանակված դատավորների անաչառությունը: Իրենց կողմից ներկայացված բացարկի միջնորդության մեջ պաշտպանները նշել են, որ մարտի 11-ին իրենք տեղեկացվել են այն մասին, որ գործը հանձնվել է զեկուցող դատավորին:

37. Նույն օրը Վերաքննիչ դատարանը երկու կողմերի բացակայությամբ քննել է դիմումատուի վերաքննիչ բողոքը: Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշում է կայացրել 2007 թվականի փետրվարի 23-ին կայացրած որոշման մեջ տեղ գտած նույն պատճառաբանությամբ: Այդ որոշման մեջ նշվել է, որ կողմերը պատշաճ կերպով ծանուցվել են դատական նիստի մասին, սակայն չեն ներկայացել: Դա երեւում է նաեւ դատական նիստի արձանագրությունից, որում նշվել է, որ կողմերը դատական նիստի մասին տեղեկացվել են նաեւ դատավորի օգնականի կողմից՝ հեռախոսազանգով: Պարզվում է, որ այս որոշման օրինակը դիմումատուի պաշտպանները ստացել են 2007 թվականի մայիսի 18-ին:

38. 2007 թվականի մայիսին նախաքննությունն ավարտվել է, եւ մայիսի 15-ից 29-ն ընկած ժամանակահատվածում դիմումատուին

հնարավորություն է տրվել ծանոթանալու գործի նյութերին: Նա նշում է, որ ինքը միայն այդ ժամանակ է տեղեկացել 2006 թվականի օգոստոսի 15-ին կայացված որոշման մասին, որով թույլատրվել է իր հեռախոսային խոսակցությունների գաղտնի վերահսկումը:

39. 2007 թվականի հունիսի 5-ին դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը, եւ գործն ուղարկվել է դատարան:

40. 2007 թվականին հունիսի 7-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանի (Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների դատարան) դատավոր Մ.-ն որոշում է կայացրել դիմումատուի վերաբերյալ քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

41. 2007 թվականի հունիսի 10-ին լրացել է դիմումատուի՝ 2007 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ նշանակված կալանքի ժամկետը:

42. 2007 թվականի հունիսի 12-ին դիմումատուն բողոք է ներկայացրել Գլխավոր դատախազին եւ Արդարադատության նախարարին այն մասին, որ դատարանի կողմից նշանակված իր կալանքի ժամկետը լրացել է 2007 թվականի հունիսի 10-ին, եւ որ իրեն կալանքի տակ պահել շարունակելն իրավաչափ չէ: Նա պնդել է, որ ինքը պետք է ազատ արձակվի:

43. 2007 թվականի հունիսի 22-ին դատավոր Մ.-ն որոշում է կայացրել դիմումատուի վերաբերյալ քրեական գործը դատաքննության նշանակելու մասին: Այդ որոշման մեջ նշվել է, որ դիմումատուի նկատմամբ կիրառված խափանման միջոցը պետք է թողնել անփոփոխ:

44. 2007 թվականի օգոստոսի 6-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել 235-րդ հոդվածի 1-ին մասով եւ արդարացրել 301-րդ հոդվածով: Վարչական շրջանների դատարանը, ուսումնասիրելով դիմումատուի ելույթում արված հայտարարությունները, պարզել է, որ դրանք չեն կարող որակվել որպես իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչեր:

Ինչ վերաբերում է ապօրինի կերպով զենք պահելու մասով առաջադրված մեղադրանքին, Վարչական շրջանների դատարանը գտել է, որ դիմումատուն իր դեմոբիլիզացիայից հետո զենքն ու ռազմամթերքը պահել է առանց թույլտվության: Դիմումատուն դատապարտվել է մեկ տարի եւ վեց ամիս ժամկետով ազատազրկման: Դիմումատուի գործով մյուս երկու մեղադրյալները նույնպես մեղավոր են ճանաչվել առաջադրված մեղադրանքներում:

45. 2007 թվականի սեպտեմբերի 25-ին Վերաքննիչ քրեական դատարանն անփոփոխ է թողել այս վճիռը, որը բողոքարկվել էր:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Քրեական օրենսգիրք (ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին)

46. ՔՕ-ի համապատասխան դրույթները նախատեսում են.

Հոդված 235.Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը

«1. Ապօրինի կերպով հրազեն, բացի ողորկափող հրազենից եւ դրա փամփուշտներից, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը պատժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

Հոդված 301. Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը

«Պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»:

Բ. Քրեական դատավարության օրենսգիրք (ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից)

1. Կալանքը

47. Համապատասխան դրույթների համառոտ նկարագրությանը ծանոթանալու համար տե՛ս Պողոսյանն ընդդեմ Հայաստանի [*Poghosyan v. Armenia*] գործով վճիռը (թիվ 44068/07, §§ 26-41, 2011 թվականի դեկտեմբերի 20): Այդ վճռում չեն մեջբերվել ՔԴՕ-ի հետևյալ դրույթները.

48. 135-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝ 1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից. 2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով. 3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք. 4) խուսափել քրեական պատասխանատվությունից եւ նշանակված պատիժը կրելուց. 5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարումը: Խափանման միջոց

կիրառելու անհրաժեշտության եւ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝ 1) վերագրվող արարքի բնույթը եւ վտանգավորության աստիճանը. 2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը. 3) տարիքը եւ առողջական վիճակը. 4) սեռը. 5) զբաղմունքի տեսակը. 6) ընտանեկան դրությունը եւ խնամարկյալների առկայությունը. 7) գույքային դրությունը. 8) բնակության մշտական վայրի առկայությունը. 9) այլ էական հանգամանքներ:

49. 139-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության դեպքում քննիչը, դատախազը, ոչ ուշ, քան կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց 10 օր առաջ, պետք է դատարան ներկայացնեն հիմնավորված միջնորդություն: Դատարանը, համաձայնվելով կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու անհրաժեշտությանը, ոչ ուշ, քան դատարանի՝ կալանքի տակ պահելու որոշած ժամկետը լրանալուց 5 օր առաջ, համապատասխան որոշում է կայացնում:

50. 285-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության դեպքում, դատախազը կամ քննիչը միջնորդություն է հարուցում դատարան՝ խափանման միջոցի այդ տեսակը ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու մասին: Միջնորդություն հարուցելու որոշման մեջ պետք է շարադրվեն այն շարժառիթները եւ հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտություն: Որոշմանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը, եթե այդպիսիք առնչություն ունեն գործի հետ, դատական քննության ժամի եւ վայրի մասին:

51. 288-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանի կողմից կալանքի նկատմամբ դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի եւ պաշտպանի ներկայությամբ: Բողոքը քննելու օրվա մասին նախապես իրազեկ կողմի չներկայանալը չի խոչընդոտում դատական ստուգումն իրականացնելուն:

2. Գործի նյութերին ծանոթանալը

52. 65-րդ հոդվածի 2-րդ մասի 16-րդ կետի համաձայն՝ մեղադրյալն իրավունք ունի նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին:

53. 73-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ պաշտպանը իրավունքի ունի նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել եւ գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություն:

54. 201-րդ հոդվածի համաձայն՝ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ:

55. 265-րդ հոդվածի համաձայն՝ մեղադրական եզրակացություն կազմելու համար հավաքված ապացույցները բավարար համարելով՝ քննիչն այդ մասին հաղորդում է մեղադրյալին եւ որոշում է գործի նյութերի հետ վերջինիս ծանոթանալու ժամանակը եւ տեղը:

3. Հեռախոսային խոսակցությունների գաղտնի վերահսկումը

56. 281-րդ հոդվածի համաձայն՝ դատարանի որոշմամբ են կատարվում այն օպերատիվ-հետախուզական գործողությունները, որոնք կապված են քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հետ: Դատարանի որոշման հիման վրա իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները սահմանվում են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով:

57. 284-րդ հոդվածի համաձայն՝ անձանց նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակում նախատեսող օպերատիվ-

հետախուզական միջոցառումները, բացառությամբ այն դեպքերի, երբ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկը նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնություն է տվել, կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ: Սույն հոդվածով սահմանվում է նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի կողմից ներկայացված՝ հեռախոսային խոսակցությունների գաղտնի վերահսկում իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունների դատական քննարկման ընթացակարգը: Միջնորդության մեջ նշվում են օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման հիմքերը, այն տվյալները, որոնք նախատեսվում է ստանալ դրա արդյունքում, միջոցառման իրականացման տեղը եւ ժամկետը, ինչպես նաև բոլոր մյուս համապատասխան տվյալները: Միջնորդությունը կցվում են բոլոր այն նյութերը, որոնք հիմնավորում են օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման անհրաժեշտությունը: Դատարանը պետք է նշի միջնորդությունը բավարարելու կամ մերժելու հիմքերը: Դատարանի որոշման գործողության ժամկետը հաշվարկվում է դրա կայացման օրվանից եւ չի կարող գերազանցել վեց ամիսը, եթե որոշմամբ այլ բան նախատեսված չէ: Օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու ժամկետը կարող է երկարաձգվել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի՝ նման միջնորդություն պարունակող հիմնավորված որոշման հիման վրա, սույն հոդվածով սահմանված կարգով:

Գ. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքը (ընդունված է 2007 թվականի հոկտեմբերի 22-ին, ուժի մեջ է մտել 2007 թվականի դեկտեմբերի 8-ից)

58. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքը սահմանում է օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը, խնդիրները, սկզբունքները, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները, օպերատիվ-հետախուզական գործունեություն

իրականացնելիս նրանց իրավունքները եւ պարտականությունները, օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ հսկողությունը եւ վերահսկողությունը:

59. 14-րդ հոդվածով սահմանվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, որոնք ներառում են հեռախոսային խոսակցությունների վերահսկումը:

60. 26-րդ հոդվածով սահմանվում են հեռախոսային խոսակցությունների՝ ներառյալ ֆիքսված, բջջային հեռախոսային ցանցերով խոսակցությունների եւ ինտերնետային հեռախոսային խոսակցությունների վերահսկման որոշ տեխնիկական առանձնահատկությունները:

61. 31-րդ հոդվածով սահմանվում է, որ հեռախոսային խոսակցությունների գաղտնի վերահսկումը, որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում, կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դա անցկացվի, կասկածվում է ծանր եւ առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, եւ եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է:

62. 39-րդ հոդվածով սահմանվում է, որ հեռախոսային խոսակցությունների գաղտնի վերահսկման ընդհանուր ժամկետը չի կարող 12 ամսից ավել տևել:

Դ. «Իրավական ակտերի մասին» օրենքը (ուժի մեջ է մտել 2002 թվականի մայիսի 31- ից)

63. 68-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե իրավական ակտում նախատեսված նորմի պահանջի կատարում կարող է միայն իրականացվել այդ իրավական ակտով նախատեսված իրավական այլ ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է իրավական այլ ակտի ընդունմամբ, ապա իրավական ակտն այդ նորմի մասով գործում է համապատասխան

իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

1 ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

64. Դիմումատուն բողոքել է, որ 2007 թվականի հունիսի 10-ից 22-ն ընկած ժամանակահատվածում իր կալանավորումը թույլատրված չի եղել դատարանի որոշմամբ եւ, հետեւաբար, այն չի եղել իրավաչափ, իսկ 2007 թվականի փետրվարի 7-ին իր կալանքի ժամկետի երկարաձգումը չի համապատասխանել օրենքով սահմանված ժամկետներին: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը, որով այնքանով, որքանով վերաբերում է սույն գործին, սահմանվում է հետեւյալը.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության եւ անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետեւյալ դեպքերում եւ օրենքով սահմանված կարգով...»:

Ա. Ընդունելիությունը

1. Ներպետական իրավունքով նախատեսվող ժամկետների պահպանումը կալանավորման ժամկետը երկարաձգելիս

ա) Կողմերի փաստարկները

65. Կառավարությունը նշել է, որ Համայնքների դատարանի կողմից 2007 թվականի փետրվարի 7-ին դիմումատուի կալանքի ժամկետը երկարաձգելու մասին որոշում կայացնելիս ՔԴՕ-ի 139-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հնգօրյա ժամկետը չպահպանելու հանգամանքը բացասաբար չի անդրադարձել դիմումատուի՝ 5-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքների վրա:

Դատարանների գործավարության որոշ թերացումների պատճառով տվյալ ժամկետի վերաբերյալ ձեռնարկի պահանջի չկատարումը դիմումատուի կալանավորումը 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով կամայական չի դարձրել, քանի որ դիմումատուն արդեն կալանքի տակ էր գտնվում, եւ Վարչական շրջանների դատարանը որոշում էր կայացրել այն անփոփոխ թողնելու մասին:

66. Դիմումատուն նշել է, որ իր կալանքի ժամկետը պետք է լրանար 2007 թվականի փետրվարի 9-ին, այլ ոչ թե 2007 թվականի փետրվարի 10-ին, քանի որ կալանքի տակ պահելու ժամկետը պետք էր հաշվել իրեն փաստացի արգելանքի վերցնելու օրվանից, այլ ոչ թե ձերբակալման մասին արձանագրությունը կազմելու օրվանից: Ամեն դեպքում, թե՛ քննիչը, թե՛ Վարչական շրջանների դատարանը չեն պահպանել ՔԴՕ-ի 139-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետները: Դա ներպետական իրավունքի կոպիտ խախտում է եւ Վարչական շրջանների դատարանի որոշումը բեկանելու հիմնավոր պատճառ: Ավելին, քանի որ ներպետական իրավունքի խախտման հետեւանքով խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը, իր գործի ընթացքում ժամկետների պահպանման պահանջը չկատարելը հանգեցրել է այդ դրույթի խախտմանը:

բ) Դատարանի գնահատականը

67. Դատարանը վերահաստատում է, որ 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված «օրինական» եւ «օրենքով սահմանված կարգով» արտահայտությունները, ըստ էության, հղում են կատարում ներպետական իրավունքին եւ ամրագրում այդ իրավունքի նյութաիրավական եւ ընթացակարգային պահանջները պահպանելու պարտավորությունը: Չնայած այն հանգամանքին, որ ներպետական իրավունքի մեկնաբանման եւ կիրառման հարցն առաջին հերթին ներպետական իշխանությունների, մասնավորապես՝ դատարանների խնդիրն է, 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ներպետական օրենսդրության պահանջները չպահպանելը հանգեցնում է Կոնվենցիայի խախտմանը, եւ Դատարանը կարող է ու պետք է ստուգի, թե արդյոք այդ իրավունքի պահանջները պահպանվել են (տե՛ս, ի թիվս շատ այլ վճիռների, *Բենհեմն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Benham v. the United Kingdom*], 1996 թվականի հունիսի 10, § 41, *Վճիռների եւ որոշումների*

մասին զեկույցներ 1996-III եւ Ասանիձեն ընդդեմ Վրաստանի [ՄՊ] [*Assanidze v. Georgia* [GC]], թիվ 71503/01, § 171, ՄԻԵԴ 2004-II): Կալանավորման ժամկետը սկզբունքորեն «օրինական» է, եթե այն հիմնվում է դատարանի որոշման վրա: Նույնիսկ կալանավորման մասին որոշման մեջ առկա թերությունները 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով անպայմանորեն չեն հանգեցնում կալանքի տակ պահելու հիմնական ժամկետի անօրինականությանը (տե՛ս *Բենհեմի* գործը՝ վերելում հիշատակված, §§ 42-47 եւ *Յեշիուսն ընդդեմ Լիտվայի* [*Jėčius V. Lithuania*], թիվ 34578/97, § 68, ՄԻԵԴ 2000-IX):

68. Սույն գործով դատարանի որոշմամբ սահմանված՝ դիմումատուի երկամսյա կալանքի ժամկետը պետք է լրանար 2007 թվականի փետրվարի 10-ին: Դիմումատուն վիճարկել է այդ փաստը եւ պնդել, որ կալանքի ժամկետը պետք է լրանար 2007 թվականի փետրվարի 9-ին: Դատարանն անհրաժեշտ չի համարում որոշում կայացնել տվյալ անհամաձայնության հարցով՝ ստորեւ ներկայացված պատճառներով: ՔԴՕ-ի 139-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության դեպքում քննիչը, ոչ ուշ, քան կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց 10 օր առաջ, պետք է դատարան ներկայացնի միջնորդություն եւ դատարանը, ոչ ուշ, քան կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց 5 օր առաջ, համապատասխան որոշում է կայացնում: Դիմումատուի գործով քննիչը կալանավորման ժամկետը երկարաձգելու միջնորդություն է ներկայացրել 2007 թվականի փետրվարի 1-ին, մինչդեռ Համայնքների դատարանը միջնորդությունը բավարարելու եւ դիմումատուի կալանավորման ժամկետը երկու ամսով երկարաձգելու մասին իր որոշումն ընդունել է 2007 թվականի փետրվարի 7-ին:

69. Դատարանը նշում է, որ այն ժամանակ, երբ Համայնքների դատարանը 2007 թվականի փետրվարի 7-ին ընդունել է դիմումատուի կալանավորման ժամկետը երկարաձգելու մասին որոշում, դիմումատուի ընթացիկ կալանքը դեռեւս ուժի մեջ [օրինական] է եղել, քանի որ թույլատրված է եղել Համայնքների դատարանի նախորդ՝ 2006 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ: Ավելին, 2007 թվականի փետրվարի 7-ի որոշումը, որը թեւեւ կայացվել է կարճատեւ ուշացումով,

այնուամենայնիվ, կայացվել է կալանքի տակ պահելու թույլատրված ժամկետը լրանալուց մի քանի օր առաջ: Այն ընդունվել է իրավասու դատարանի կողմից՝ քննիչի միջնորդության հիման վրա՝ ներպետական իրավունքի պահանջների համաձայն: Դատարանը համարում է, որ ենթադրյալ ընթացակարգային այդ թերությունները, մասնավորապես՝ քննիչի կողմից միջնորդությունը ներկայացնելու եւ այն [Համայնքների դատարանի կողմից] քննելու հետ կապված կարճատեւ ուշացումները կրել են այնպիսի ձեւական եւ աննշան բնույթ, որ չէին կարող ազդել կալանքի տակ պահելու ժամկետի օրինականության վրա:

70 Հետեւաբար գանգատի այս մասն ակնհայտ անհիմն է եւ պետք է մերժվի՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի եւ 4-րդ կետի համաձայն:

2. 2007 թվականի հունիսի 10-ից 22-ն ընկած ժամանակահատվածում կալանքի օրինականությունը

71. Դատարանը նշում է, որ այս բողոքը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով, ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

72. Կառավարությունը նշել է, որ դիմումատուի նկատմամբ 2007 թվականի հունիսի 10-ից 22-ն ընկած ժամանակահատվածում կիրառված կալանքը եղել է օրենքին, մասնավորապես՝ ՔԴՕ-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան:

73. Դիմումատուն վիճարկել է այդ փաստարկը՝ պնդելով, որ ՔԴՕ-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասը չի կարող համարվել իրեն կալանավորելու օրինական հիմք:

2. Դատարանի գնահատականը

74. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածը երաշխավորում է ազատության եւ անձնական անձեռնմխելիության հիմնարար իրավունքը: Կոնվենցիայի իմաստով այդ իրավունքն առաջնային կարեւորություն ունի «ժողովրդավարական հասարակությունում» (տե՛ս *Դե Վիլդեն, Օոմսը եւ Վերսիպյան ընդդեմ Բելգիայի* [*De Wilde, Ooms and Versyp v. Belgium*], 1971 թվականի հունիսի 18, § 65, շարք Ա, թիվ 12):

75. Երբ հարցը վերաբերում է ազատությունից զրկելուն, ապա հատկապես կարեւոր է, որ պահպանվի իրավական որոշակիության ընդհանուր սկզբունքը: Հետեւաբար էականորեն կարեւոր է, որ ներպետական իրավունքով հստակորեն սահմանված լինեն ազատությունից զրկելու պայմանները, իսկ օրենքն իր կիրառման մեջ լինի կանխատեսելի, որպեսզի համապատասխանի Կոնվենցիայով սահմանված «օրինականության» չափանիշին՝ չափանիշ, որով պահանջվում է, որ ցանկացած օրենք լինի բավարար չափով հստակ, որպեսզի ցանկացած անձ, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան խորհրդատվությամբ, հնարավորություն ունենա կանխատեսել իր գործողությունների հնարավոր հետեւանքները՝ այնքանով, որքանով դա ողջամտորեն հնարավոր է տվյալ

իրավիճակում (տե՛ս *Սթիլը եւ այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Steel and Others v. the United Kingdom*], 1998 թվականի սեպտեմբերի 23, § 54, Ձեկույցներ 1998-VII):

76. Դատարանը նշում է, որ արդեն քննել է համանման բողոք Հայաստանի դեմ բերված մեկ այլ գործով, որում եկել է այն եզրահանգման, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ այն իմաստով, որ դիմումատուի նկատմամբ կալանքը չի կիրառվել դատարանի որոշման հիման վրա եւ, հետեւաբար, եղել է անօրինական՝ նշված դրույթի իմաստով (տե՛ս *Պողոսյանի* գործը՝ վերելում հիշատակված, §§ 56-64): Դատարանը սույն գործով այլ եզրահանգում կատարելու որեւէ պատճառ չի տեսնում եւ եզրակացնում է, որ դիմումատուի նկատմամբ 2007 թվականի հունիսի 10-ից 22-ն ընկած ժամանակահատվածում կիրառված կալանքը 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով եղել է անօրինական:

77. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՅՈՒՄԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

78. Դիմումատուն բողոքել է, որ ներպետական դատարաններն իրեն կալանքի տակ պահելը շարունակելու պատճառները չեն ներկայացրել: Նա հիմնվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի վրա, որի համաձայն՝

«3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն եւ ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչեւ դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

Ա. Ընդունելիությունը

79. Դատարանը նշում է, որ այս բողոքը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ

կետի «ա» ենթակետի իմաստով, ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

80. Կառավարությունը պնդել է, որ ներպետական դատարանները գործի նյութերի հիման վրա ներկայացրել են դիմումատուին կալանքի տակ պահելը շարունակելու հիմնավոր եւ բավարար պատճառներ:

81. Դիմումատուն նշել է, որ ներպետական դատարանները չեն կարողացել ներկայացնել իրեն կալանքի տակ պահելը շարունակելու համապատասխան եւ բավարար պատճառներ, իսկ նրանց կողմից տրված պատճառաբանությունը հիմնականում եղել է համապատասխան իրավական դրույթների մեջբերում՝ առանց դիմումատուի գործի հատուկ հանգամանքների գնահատման: Դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ իրեն առաջադրված մեղադրանքը եղել է ոչ մեծ ծանրության հանցանքների համար, ինչպես նաեւ հաշվի չեն առել իր անձնական կարգավիճակը: Վերջապես, նախաքննությունը չի իրականացվել պատշաճ ջանասիրությամբ, քանի որ այն տեւել է ավելի քան վեց ամիս՝ չնայած այն հանգամանքին, որ գործին առնչվող բոլոր ապացույցները հավաքվել են նախաքննության երկրորդ օրը:

2. Դատարանի գնահատականը

ա) Ընդհանուր սկզբունքները

82. Հանցանք կատարելու մեջ մեղադրվող անձը նախքան դատաքննությունը միշտ պետք է ազատ արձակվի, եթե պետությունը ցույց չի տալիս, որ կալանքի տակ պահելը շարունակելու համար գոյություն ունեն «համապատասխան եւ բավարար» պատճառներ: (տե՛ս *Սմիրնովան ընդդեմ Ռուսաստանի* [*Smirnova v. Russia*, թիվ 46133/99 եւ 48183/99, § 58, ՄԻԵԴ 2003-IX (քաղվածքներ). *Բեկչիեն ընդդեմ Սոլդովայի* [*Becciev v. Moldova*], թիվ 9190/03, § 53, 2005 թվականի հոկտեմբերի 4 եւ *Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի* [*Khodorkovskiy v. Russia*], թիվ 5829/04, § 182, 2011 թվականի մայիսի 31):

83. Ներպետական դատարանները պետք է ուսումնասիրեն բոլոր փաստերը, որոնք հերքում կամ հիմնավորում են այնպիսի հանրային շահի իրական պահանջի առկայությանը, որը, պատշաճ կերպով հաշվի առնելով անձի անմեղության կանխավարկածի սկզբունքը, արդարացնում է անձնական ազատությունը հարգելու կանոնից կատարվող շեղումը, եւ պետք է դրանք ամրագրեն իրենց՝ անձին ազատ արձակելու մասին միջնորդությունների վերաբերյալ կայացրած որոշումներում (տե՛ս *Լըտելյեն ընդդեմ Ֆրանսիայի* [*Letellier v. France*], 1991 թվականի հունիսի 26, § 35, շարք Ա թիվ 207): Ազատ արձակելու վերաբերյալ կողմ կամ դեմ փաստարկները չպետք է ունենան ընդհանրական եւ վերացական բնույթ (տե՛ս *Քլութն ընդդեմ Բելգիայի* [*Clooth v. Belgium*], 1991 թվականի դեկտեմբերի 12, § 44, շարք Ա, թիվ 225):

84. Ձերբակալվածի կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի շարունակական գոյությունը *sine qua non* (պարտադիր պայման) է կալանքի տակ պահելը շարունակելու օրինականության համար, սակայն որոշ ժամանակ անց, այն դառնում է ոչ բավարար: Նման դեպքերում Դատարանը պետք է պարզի, թե արդյոք դատական մարմինների կողմից ներկայացված մյուս հիմքերով շարունակվում է հիմնավորվել ազատությունից զրկելը: Եթե այդ

հիմքերը «համապատասխան» եւ «բավարար» են, ապա Դատարանը պետք է պարզի նաեւ, թե քննությունն իրականացնելիս իրավասու ազգային իշխանություններն արդյոք դրսևորել են «պատշաճ ջանասիրություն» (տե՛ս *Լաբիթան ընդդէմ Իտալիայի* [ՄՊ] [*Labita v. Italy* [GC]], թիվ 26772/95, § 153, ՄԻԵԴ 2000-IV):

85. Կոնվենցիայի նախադեպային իրավունքը մշակել է հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին մինչեւ դատավճիռը կալանքի տակ պահելու համար ընդունելի չորս հիմնական հիմքերը՝ մեղադրյալի՝ դատաքննությանը չներկայանալու վտանգը (տե՛ս *Շտոլցմուլլերն ընդդէմ Ավստրիայի* [*Stögmüller v. Austria*], 1969 թվականի նոյեմբերի 10, § 15, շարք Ա, թիվ 9), այն վտանգը, որ մեղադրյալն ազատ արձակվելու դեպքում կխոչընդոտի արդարադատության իրականացմանը, (տե՛ս *Վեմհոֆն ընդդէմ Գերմանիայի* [*Wemhoff v. Germany*], 1968 թվականի հունիսի 27, § 14, շարք Ա, թիվ 7) կամ կկատարի նոր հանցանքներ (տե՛ս *Մացնեթերն ընդդէմ Ավստրիայի* [*Matznetter v. Austria*], 1969 թվականի նոյեմբերի 10, § 9, շարք Ա, թիվ 10) կամ կխախտի հասարակական կարգը (տե՛ս *Լըտեյլեի* գործը՝ վերելում հիշատակված, § 51):

86. Քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգավորության աստիճանը չի կարող չափվել միայն նախատեսվող պատժի խստությամբ: Այն պետք է գնահատվի՝ մի շարք այլ վերաբերելի գործոնները հաշվի առնելով, որոնք կարող են կա՛մ հաստատել քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգի առկայությունը, կա՛մ կարող են այն դարձնել այնքան չնչին, որ հնարավոր չլինի հիմնավորել կալանքը նախքան դատաքննությունը (տե՛ս *Յագչին եւ Սարգընն ընդդէմ Թուրքիայի* [*Yağcı and Sargin v. Turkey*], 1995 թվականի հունիսի 8, § 52, շարք Ա, թիվ 319-Ա): Քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգը պետք է գնահատվի այնպիսի հանգամանքների լույսի ներքո, ինչպիսիք են անձի բնութագիրը, նրա բարոյական կերպարը, տուն ունենալու հանգամանքը, զբաղվածությունը, ունեցվածքը, ընտանեկան կապերը, ինչպես նաեւ բոլոր կապերն այն պետության հետ, որում նա հետապնդվում է: Ծանր պատժի ակնկալիքը եւ ապացույցների ծանրակշիռ լինելը կարող են

վերաբերելի լինել, սակայն որպես այդպիսին որոշիչ չեն, եւ կարող է անհրաժեշտ լինել երաշխիքներ ստանալու հնարավորության օգտագործումը՝ բոլոր վտանգները չեզոքացնելու նպատակով (տե՛ս *Նոյմայսթերն ընդդէմ Ավստրիայի* [*Neumeister v. Austria*], 1968 թվականի հունիսի 27, § 10, շարք Ա, թիվ 8):

87. Մեղադրյալի կողմից վարույթի պատշաճ ընթացքին խոչընդոտելու վտանգի վրա չի կարելի հիմնվել *in abstracto* (վերացական կարգով). այն պետք է հիմնավորել փաստացի ապացույցներով (տե՛ս Տշասկան ընդդէմ Լեհաստանի [*Trzaska v. Poland*], թիվ 25792/94, § 65, 2000 թվականի հուլիսի 11):

բ) Վերոնշյալ սկզբունքների կիրառումը սույն գործով

88. Սույն գործով Դատարանը նշում է, որ դիմումատուին կալանավորելու եւ կալանքի ժամկետը երկարաձգելու մասին որոշում կայացնելիս ներպետական դատարանները հիմնվել են մեղադրանքի ծանրության եւ դիմումատուի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու եւ վարույթին խոչընդոտելու վտանգի վրա:

89. Դատարանի դիտարկմամբ՝ թե՛ Կետրոն եւ Նորք-Մարաշ համայնքների դատարանը, թե՛ Քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանը դիմումատուին կալանավորելու եւ կալանքի ժամկետը երկարաձգելու մասին իրենց որոշումներում սահմանափակվել են նշված հիմքերը վերացական եւ կարծրատիպային ձեւով կրկնելով՝ առանց մատնանշելու որեւէ պատճառ առ այն, թե ինչու են իրենք հիմնավորված համարել այն պնդումները, թե դիմումատուն կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ խոչընդոտել վարույթի ընթացքին: Նրանք չեն էլ փորձել հերքել դիմումատուի փաստարկները: Այն հանցանքի ծանրության ընդհանրական վկայակոչումը, որի մեջ մեղադրվել է դիմումատուն, եւ որի վրա մի քանի առիթով հիմնվել են դատարանները, չի կարող ենթադրյալ վտանգների համար բավարար հիմնավորում համարվել: Ավելին, այն պահին, երբ գործը հանձնվել է դատարան, գործը քննող դատարանը դիմումատուի կալանքի ժամկետի երկարաձգման որեւէ պատճառ չի ներկայացրել (տե՛ս վերելում՝ 43-րդ պարբերությունը):

90. Ճիշտ է, մի դեպքում գրավով կալանքից ազատվելու մասին

դիմումատուի միջնորդությունը մերժելիս՝ Վերաքննիչ դատարանը քրեական վարույթն իրականացնող մարմնից դիմումատուի թաքնվելու վտանգը հիմնավորել է այն փաստով, որ նա օտարերկրյա քաղաքացի է (տե՛ս վերելում՝ 25-րդ պարբերությունը): Դատարանը համարում է, որ վերաբերելի գործոն լինելով հանդերձ, այն ինքնին բավարար չէ գրավով կալանքից չազատելը հիմնավորելու համար: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել Դատարանի նախադեպային իրավունքով սահմանված գործոններից ոչ մեկը (տե՛ս վերելում՝ 86-րդ պարբերությունը)՝ ներառյալ այն փաստը, որ դիմումատուն 1992 թվականից ի վեր մշտապես բնակվել է Հայաստանում, ունեցել է ընտանիք, սեփականություն էւ ակնհայտորեն ամուր սոցիալական կապեր երկրի հետ: Այն փաստը, որ նրա անձնագիրն առգրավվել է, նույնպես անտեսվել է, չնայած դա զգալիորեն նվազեցրել է փախուստի վտանգը:

91. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի նույն որոշման մեջ նշված՝ գրավով կալանքից չազատելու մյուս հիմքին՝ մասնավորապես այն, որ նույն գործով մեղադրվող մեկ այլ անձ նույնպես գտնվում էր կալանքի տակ, Դատարանի համար պարզ չէ, թե ինչպես է այն առնչվում դիմումատուի գործին: Այսպիսով, այն դեպքում, երբ կալանքի տակ պահելը շարունակելու միակ պատճառն այն մտավախությունն է, որ մեղադրյալը կթաքնվի քրեական վարույթն իրականացնող մարմնից եւ, այդպիսով, հետագայում կխուսափի դատական քննությանը ներկայանալուց, ապա պետք է ընդունել նրան նախքան դատաքննությունն ազատ արձակելու մասին որոշում, եթե հնարավոր է նրանից ստանալ երաշխիքներ, որոնք կապահովեն նրա ներկայությունը (տե՛ս *Վեմհոֆի* գործը՝ վերելում հիշատակված, § 15): Սույն գործով ներպետական դատարանները նույնիսկ չեն դիտարկել այդ հնարավորությունը եւ մերժել են գրավով կալանքից ազատվելու նրա միջնորդությունը՝ առանց նրա հատուկ իրավիճակի մանրամասն քննություն անցկացնելու:

92. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը գտնում է, որ այն պատճառաբանությունները, որոնց հիման վրա Համայնքների դատարանի եւ Վերաքննիչ դատարանի կողմից դիմումատուի կալանավորման, կալանքի

Ժամկետի երկարաձգման եւ գրավով ազատելը մերժելու մասին որոշումներ են ընդունվել, «համապատասխան եւ բավարար» չեն եղել:

93. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

94. Դիմումատուն բողոք է ներկայացրել այն մասին, որ 2007 թվականի փետրվարի 7-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների դատարանում ընթացող վարույթը մրցակցության սկզբունքի վրա հիմնված չի եղել, եւ որ ինքը զրկված է եղել 2007 թվականի մայիսի 14-ին Վերաքննիչ դատարանում տեղի ունեցած բանավոր լսումներին մասնակցելու հնարավորությունից: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը: Դատարանը որոշել է քննել այդ բողոքները՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն (տե՛ս ստորել՝ 101-102-րդ պարբերությունները), որով այնքանով, որքանով վերաբերում է սույն գործին, սահմանվում է հետեւյալը.«4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում եւ կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»:

Ա. Ընդունելիությունը

1. Մրցակցության սկզբունքի վրա հիմնված վարույթը եւ կողմերի իրավահավասարությունը

95. Կառավարությունը նշել է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետը կիրառելի չէ 2007 թվականի փետրվարի 7-ին տեղի ունեցած՝ կալանքի տակ պահելու հարցով դատական նիստի պարագայում, քանի որ դրա ժամանակ քննիչի միջնորդությամբ դիմումատուի կալանքի ժամկետի երկարաձգման հետ կապված որոշում է կայացվել, մինչդեռ սույն հոդվածը կիրառելի է միայն կալանավորված անձի կողմից նախաձեռնած վարույթի [ներկայացված միջնորդության քննության] դեպքում: Հետեւաբար կալանքի հարցի վերաբերյալ տվյալ դատական նիստի վրա տարածվում է 5-րդ հոդվածի 3-րդ կետը, որով չի պահանջվում, որ առաջին աստիճանի դատարանի վարույթը մրցակցային սկզբունքի վրա հիմնված լինի:

96. Դիմումատուն նշել է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետը կիրառելի է տվյալ վարույթի դեպքում:

97. Դատարանը նշում է, որ Կառավարության առարկությունը սերտորեն կապված է դիմումատուի բողոքի բովանդակության հետ եւ, հետեւաբար, պետք է կցվի գործի ըստ էության քննության շրջանակին:

2. Եզրակացություն

98. Դատարանը նշում է, որ այս բողոքները, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով, ակնհայտ անհիմն չեն: Դատարանն այնուհետեւ նշում է, որ դրանք անընդունելի չեն որեւէ այլ հիմքով: Հետեւաբար դրանք պետք է հայտարարվեն ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Մրցակցության սկզբունքի վրա հիմնված վարույթը եւ կողմերի իրավահավասարությունը

ա) Կողմերի փաստարկները

99. Կառավարությունը նշել է, որ ՔԴՕ-ի 201-րդ հոդվածը թույլ է տալիս, որ նախնական քննության տվյալները հրապարակվեն միայն քննչական մարմնի թույլտվությամբ: Հետեւաբար 2007 թվականի փետրվարի 7-ի դատական նիստից առաջ քննիչը կալանքի ժամկետի երկարաձգման հարցով իր միջնորդության հետ միասին Համայնքների դատարան է ներկայացրել իր միջնորդությունը հիմնավորող որոշ փաստաթղթեր: Միեւնույն ժամանակ քննիչը նպատակահարմար չի գտել այդ փաստաթղթերը ներկայացնել դիմումատուին եւ նրա պաշտպանին, քանի որ ըստ օրենքի՝ մեղադրյալն իրավունք ուներ ծանոթանալ գործի նյութերին միայն նախաքննության ավարտից հետո: Այնուամենայնիվ, սա խնդիր չի առաջացրել, քանի որ տվյալ վարույթի վրա, ի տարբերություն 5-րդ հոդվածի 4-րդ կետի, տարածվել է 5-րդ հոդվածի 3-րդ կետը, եւ մրցակցային դատավարության մասին պահանջը կիրառելի չի եղել:

100. Դիմումատուն նշել է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետով պահանջվում էր, որ վարույթը հիմնվի մրցակցային սկզբունքի վրա եւ ապահովվի կողմերի իրավահավասարությունը, ինչը տվյալ դեպքում տեղի չի ունեցել: Ո՛չ նա, ո՛չ նրա պաշտպանները տեղյակ չեն եղել, որ քննիչն իր՝ 2007 թվականի փետրվարի 1-ի միջնորդությունը հիմնավորող որոշ փաստաթղթեր է ներկայացրել նախագահող դատավորին: Օրենքով սահմանված սահմանափակումների պատճառով այդ փաստաթղթերը նրանց հասանելի չեն եղել, եւ նրանք չեն կարողացել դրանց վերաբերյալ մեկնաբանություններ անել: Հետեւաբար նա զրկվել է իր գործն արդյունավետորեն ներկայացնելու հնարավորությունից, որը 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում է:

բ) **Դատարանի գնահատականը**

101. Դատարանը նախ կանդրադառնա տվյալ գործով ընթացած վարույթի նկատմամբ 5-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառելիության հարցին, մասնավորապես՝ 2007 թվականի փետրվարի 7-ին կայացած՝ կալանքի վերաբերյալ դատական նիստին, որի ժամանակ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների դատարանը որոշել է բավարարել դիմումատուի կալանքի ժամկետը երկարաձգելու մասին քննիչի միջնորդությունը:

102. Դատարանը նշում է, որ սույն գործով Կառավարության կողմից ներկայացված նմանատիպ առարկություն քննվել եւ մերժվել է *Լեբեդեւն ընդդեմ Ռուսաստանի* [*Lebedev v. Russia*] (թիվ 4493/04, 2007 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռ) գործով: Այդ գործով Դատարանը համարել է, որ մեծ նշանակություն չունի այն, թե արդյոք ներպետական դատարանը որոշումը կայացրել է պաշտպանության կողմի ներկայացրած՝ ազատ արձակելու վերաբերյալ միջնորդության, թե մեղադրանքի կողմի ներկայացրած կալանավորման միջնորդության հիման վրա (տե՛ս նույն տեղում, § 72): Սույն եզրակացությանը հանգելիս՝ Դատարանը հղում է կատարել մի շարք գործերի, որոնցով որոշել էր, որ մեղադրանքի կողմի միջնորդությամբ դատարանի կողմից դիմումատուի նախնական կալանքի ժամկետի երկարաձգումը ներառել է նաեւ 5-րդ հոդվածի 4-րդ կետի երաշխիքները (տե՛ս *Գրաուժինիսն ընդդեմ Լիտվայի* [*Grauzinis v. Lithuania*], թիվ 37975/97, § 33, 2000 թվականի հոկտեմբերի 10, *Վուլոխն ընդդեմ Լեհաստանի* [*Włoch v. Poland*], թիվ 27785/95, §§ 125 եւ հաջորդող էջերը, ՄԻԵԴ 2000-XI եւ *Տելեցկին ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [*Telecki v. Poland* (dec.)] թիվ 56552/00, 2003 թվականի հուլիսի 3): Այնուհետեւ, Դատարանը եզրակացրել է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետը կիրառելի է եղել դիմումատուի կալանքի ժամկետը երկարաձգելու հարցի վերաբերյալ ընթացած վարույթի դեպքում (տե՛ս *Լեբեդեւի* գործը՝ վերելում հիշատակված, § 74): Հետեւաբար Դատարանը եզրակացնում է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետի երաշխիքները կիրառելի են 2007 թվականի փետրվարի 7-ին կայացած՝ կալանքի վերաբերյալ լսումների նկատմամբ, եւ որոշում է մերժել

Կառավարության առարկությունը:

103. Դատարանը վերահաստատում է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետով պահանջվում է, որ կալանքի դեմ ներկայացված բողոքը քննելիս դատարանն ապահովի դատական ընթացակարգի երաշխիքները: Քննությունը պետք է հիմնված լինի մրցակցային սկզբունքի վրա, եւ միշտ պետք է ապահովվի «կողմերի իրավահավասարությունը»՝ մեղադրանքի կողմի եւ կալանավորված անձի միջեւ: Կողմերի իրավահավասարություն չի ապահովվում, եթե պաշտպանին մերժում են տրամադրել գործով նախաքննությամբ ձեռք բերված այն փաստաթղթերը, որոնք կարելու է նրա պաշտպանյալին կալանքի տակ պահելու օրինականությունն արդյունավետորեն վիճարկելու համար (տե՛ս *Lamy v. Belgium*], 1989 թվականի մարտի 30, § 29, շարք Ա, թիվ 151, Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի [ՄՊ] [*Nikolova v. Bulgaria* [GC]], թիվ 31195/96, § 58, ՄԻԵԴ 1999-II եւ *Գարսիա Ալվան ընդդեմ Գերմանիայի* [*Garcia Alva v. Germany*], թիվ 23541/94, § 39, 2001 թվականի փետրվարի 13): Ըստ այդ սկզբունքի՝ դատարանից կարող է նաեւ պահանջվել հարցաքննել այն վկաներին, որոնց ցուցմունքները *prima facie* (առերևույթ) կարող են էական ազդեցություն ունենալ կալանքը օրինական հիմքով շարունակելու վրա (տե՛ս *Ա.-ն եւ այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] [*A. and Others v. the United Kingdom* [GC]], թիվ 3455/05, § 204, ՄԻԵԴ 2009):

104. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանը նշում է, որ քննիչը 2007 թվականի փետրվարի 1-ին միջնորդություն է ներկայացրել Համայնքների դատարան՝ միջնորդելով երկարաձգել դիմումատուի կալանքի ժամկետը: Ի հիմնավորումն սույն միջնորդության՝ քննիչը ներկայացրել է գործի նյութերում առկա որոշ ապացույցներ, որոնք չեն տրամադրվել դիմումատուի պաշտպաններին, եւ նրանք չեն կարողացել որեւէ մեկնաբանություն անել դրանց վերաբերյալ կամ վիճարկել այդ ապացույցները: Այդ փաստն ընդունվել է Համայնքների դատարանի կողմից՝ կալանքի վերաբերյալ հաջորդ դատական նիստի ժամանակ (տե՛ս վերելում՝ 31-րդ պարբերությունը): Կառավարությունը նույնպես ընդունել է դա, սակայն փորձել է դա հիմնավորել այն փաստով,

որ ներպետական իրավունքով արգելվում է գործի նյութերը պաշտպանության կողմին տրամադրել մինչև նախաքննության ավարտը: Դատարանը համարում է, որ ներպետական իրավունքն այս առումով չափազանց մեծ սահմանափակում է նախատեսում: Ինչպես արդեն նշվել է նախորդ պարբերությունում, իր վստահորդին վերաբերող փաստարկների հիմքը եւ նրան կալանքի տակ պահելու օրինականությունն արդյունավետորեն վիճարկելու նպատակով՝ պաշտպանության կողմին պետք է տրամադրվեն գործին առնչվող առնվազն այն նյութերը, որոնք վերջինիս անհրաժեշտ են դա անելու համար, այդ թվում՝ արդարացնող ապացույցները: Այս առումով Դատարանը քրեական գործի բոլոր նյութերը, որոնց, ընդհանուր առմամբ, 6-րդ հոդվածի համաձայն, կողմը պետք է իրավունք ունենա ծանոթանալ անձի մեղավորության հարցը որոշելու համար (տե՛ս, այնուամենայնիվ, նույն տեղում, § 205), տարբերակում է այն նյութերից, որոնք պետք է տրամադրվեն 5-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսվող ընթացակարգի առնչությամբ: Այնուամենայնիվ, սույն գործի պարագայում դա տեղի չի ունեցել: Հետեւաբար Դատարանը եզրակացնում է, որ այն ընթացակարգով, որով 2007 թվականի փետրվարի 7-ին Համայնքների դատարանում իրականացվել է վարույթը, չի ապահովվել մրցակցային դատավարության սկզբունքը եւ կողմերի իրավահավասարությունը:

105. Հետեւաբար այս առումով տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում:

2. Բանավոր դատաքննությունը

ա) Կողմերի փաստարկները

106. Կառավարությունը նշել է, որ դիմումատուի պաշտպանները պատվիրված նամակով ծանուցվել են 2007 թվականի մայիսի 14-ի դատական նիստի մասին: Դատարանը ծանուցագիրն ուղարկել է 2007 թվականի մայիսի 11-ին, որը հանձնվել է նրանց: Բացի այդ՝ դատական նիստի օրվա եւ ժամի մասին նրանց տեղեկացվել է նաեւ հեռախոսով, սակայն նրանք չեն ներկայացել: Վերաքննիչ դատարանը շարունակել է բողոքի քննությունը՝ ՔԴՕ-ի 288-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն: Հետեւաբար գործով վարույթը համապատասխանել է 5-րդ հոդվածի 4-րդ կետին: Ի հիմնավորումն իր փաստարկների՝ Կառավարությունը ներկայացրել է փոստային անդորրագրի պատճենը, որը պարունակել է դիմումատուի պաշտպանների անունները, Վերաքննիչ դատարանի դրոշմակնիքը եւ դարձերեսին զետեղված փոստային ծառայության դրոշմակնիքը՝ 2007 թվականի մայիսի 11-ի ամսաթվով:

107. Դիմումատուն պնդել է, որ Կառավարությունը որեւէ ապացույց չի ներկայացրել առ այն, որ իր պաշտպանները պատշաճ [Ժամանակին] ծանուցվել են 2007 թվականի մայիսի 14-ի դատական նիստի մասին: Ներկայացված փոստային անդորրագիրը չէր կարող ծառայել որպէս նման ապացույց, քանի որ անդորրագրի վրա ոչ մի հասցե չի եղել, եւ հնարավոր չէր պարզել տվյալ անդորրագրով ուղարկված նամակի բովանդակությունը: Ավելին, ներկայացված անդորրագրում ոչինչ չի վկայել այն մասին, որ տվյալ նամակն ուղարկվել է պատվիրված նամակի ձեւով: Չի եղել որեւէ այլ փաստաթուղթ առ այն, որ իրենք ստացած են եղել ծանուցագիրը:

108. Դիմումատուն նշել է, որ Վերաքննիչ դատարանի դատական նիստից իր պաշտպանների բացակայությամբ խախտվել է 5-րդ հոդվածի 4-րդ կետը: Մասնավորապէս, Վերաքննիչ դատարանը պահանջել է ստացել է մի շարք փաստաթղթեր, որոնք քննության չեն ենթարկվել Համայնքների դատարանում

ընթացած դատական նիստի ժամանակ: Իր պաշտպանները չեն կարողացել մեկնաբանություններ կատարել այդ փաստաթղթերի վերաբերյալ կամ ներկայացնել իր գործը:

բ) Դատարանի գնահատականը

109. Դատարանը վերահաստատում է, որ որոշ հանգամանքներում 5-րդ հոդվածի 4-րդ կետով կարող է պահանջվել կալանքի տակ գտնվող անձի ներկայությունը բանավոր դատաքնություններին (տե՛ս *Մինգն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Singh v. the United Kingdom*], 1996 թվականի փետրվարի 21, §§67-69, Ջեկույցներ 1996- I, Գրաուժինիսն ընդդեմ Լիտվայի՝ վերելում հիշատակված, §§33-34, *Ուեյթն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Waite v. the United Kingdom*], թիվ 53236/99, § 59, 2002 թվականի դեկտեմբերի 10, Լեբեդեի գործը՝ վերելում հիշատակված, § 113, ինչպես նաև *Խոդորկովսկիի գործը*՝ վերելում հիշատակված, § 235):

110. Այնուհետև, Դատարանը վերահաստատում է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետը Պայմանավորվող պետություններին չի պարտավորեցնում հիմնել կալանքի իրավաչափությունը եւ կալանքից ազատման վերաբերյալ դիմումները քննելու իրավասությամբ օժտված երկրորդ աստիճանի դատարան: Այդուհանդերձ, այդպիսի համակարգ ստեղծող պետությունը կալանավորվածների համար սկզբունքորեն պետք է ապահովի բողոքարկման այն նույն երաշխիքները, ինչն ապահովվում է առաջին աստիճանի դատարաններում բողոքարկման ժամանակ (տե՛ս *Թոթն ընդդեմ Ավստրիայի* [*Toth v. Austria*], 1991 թվականի դեկտեմբերի 12, § 84, շարք Ա, թիվ 224): Ավելին, չնայած Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետով չի երաշխավորվում կալանքի իրավաչափության մասին որոշումները բողոքարկելու իրավունքը, այդ դրույթի նպատակից եւ իմաստից հետեւում է, որ վերաքննիչ դատարանները պետք է պահպանեն դրա պահանջները, եթե բողոքարկվում է կալանքի իրավաչափության մասին որոշումը (տե՛ս *Ղուրենն ընդդեմ Նիդերլանդների* [*Rutten v. the Netherlands*], թիվ 32605/96, § 53, 2001 թվականի հուլիսի 24):

111. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ ո՛չ դիմումատուն,

ո՛չ էլ նրա պաշտպանները ներկա չեն գտնվել 2007 թվականի մայիսի 14-ի դատական նիստին, որի ժամանակ Վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել կալանքի ժամկետը երկարաձգելու մասին Համայնքների դատարանի 2007 թվականի ապրիլի 4-ի որոշումը: Կողմերը վիճում են այն մասին, թե արդյոք դիմումատուի պաշտպանները պատշաճ ձևով [ժամանակին] ծանուցվել են այդ դատական նիստի մասին:

112. Այս առումով Դատարանը նշում է, որ Կառավարության ներկայացրած փոստային անդորրագրից պարզ է դառնում, որ դիմումատուի պաշտպաններին 2007 թվականի մայիսի 14-ին ժամը 14:00-ին տեղի ունեցալիք դատական նիստին ներկայանալու մասին ծանուցագիրն ուղարկվել է 2007 թվականի մայիսի 11-ին: Ավելին, Վերաքննիչ դատարանում 2007 թվականի մայիսի 14-ին տեղի ունեցած դատական նիստի արձանագրությունից հետևում է, որ պաշտպաններին տեղեկացրել են նաեւ հեռախոսով, ինչը նրանք չեն ժխտել: Նման հանգամանքներում բավարար ապացույցներ չկան, որպեսզի հնարավոր լինի եզրակացնել, որ 2007 թվականի մայիսի 14-ին տեղի ունեցած դատական նիստին դիմումատուի պաշտպանների չներկայանալը կարելի է վերագրել իշխանություններին: Ուստի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման հատկանիշներ առկա չեն:

113. Հետեւաբար գանգատի այս մասն ակնհայտ անհիմն է եւ պետք է մերժվի՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի եւ 4-րդ կետի:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

114. Դիմումատուն բողոքել է, որ իր հեռախոսային խոսակցությունների գաղտնի վերահսկումը կատարվել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի երաշխիքների խախտմամբ, որի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի եւ նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված

է օրենքով եւ անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաեւ անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով»:

Ա. Ընդունելիությունը

115. Դատարանը նշում է, որ այս բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

ա) Կառավարությունը

116. Կառավարությունը նշել է, որ դիմումատուի հեռախոսային խոսակցությունների գաղտնի վերահսկումը հիմնավորված է եղել ԱԱԾ-ում ստացված տեղեկությունները քննելու նպատակով, որոնցով ենթադրվում էր, որ դիմումատուի կողմից ղեկավարվող կազմակերպությունն իրականացնում էր գործողություններ, որոնց նպատակը հակասահմանադրական ճանապարհով իշխանության գավթումն էր: Միջամտությունը կատարվել է օրենքին համապատասխան, քանի որ դրա հիմքերը եւ իրականացման կարգը սահմանված էին ՔԴՕ-ով: Այն հետապնդել է օրինական նպատակ, բխել է ազգային անվտանգության շահերից եւ անհրաժեշտ է եղել անկարգություններն ու հանցագործությունները կանխելու համար:

բ) Դիմումատուն

117. Դիմումատուն նշել է, որ քննարկվող ժամանակահատվածում Հայաստանում չկար օրենք, որով սահմանվեր հեռախոսային խոսակցությունների եւ այլ հաղորդումների գաղտնի վերահսկման եւ ձայնագրման ընթացակարգը: Կառավարության պնդումները կրել են ընդհանրական բնույթ, եւ չեն մատնանշվել անգամ ՔԴՕ-ի համապատասխան դրույթները: Այնուամենայնիվ, ՔԴՕ-ի 281-րդ հոդվածի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները՝ ներառյալ հեռախոսային խոսակցությունների գաղտնալուծումը, պետք է սահմանվեին «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով, որն ընդունվել է ուժի մեջ է մտել իր գործի հանգամանքներից հետո, մասնավորապես, համապատասխանաբար, 2007 թվականի հոկտեմբեր եւ դեկտեմբեր ամիսներին: Միայն սույն օրենքով են ներդրվել անձնական կյանքի եւ նամակագրության իրավունքների պաշտպանության որոշ օրենսդրական երաշխիքներ: «Իրավական ակտերի մասին» օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասով արգելվում է իրավական նորմի կիրառումն այն դեպքում, երբ դրա կիրարկումը պայմանավորված է մեկ այլ իրավական ակտի ընդունմամբ: Ուստի ՔԴՕ-ի 281-րդ հոդվածը չէր կարող կիրառվել նախքան «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի ընդունումը: Վերջում անհրաժեշտ է նշել, որ քննարկվող ժամանակահատվածում չի եղել օրենք, որով կկարգավորվեին 2006 թվականի օգոստոսի 15-ի դատական որոշմամբ լիազորված միջոցառումները, եւ որով իր իրավունքների համար երաշխիքներ կապահովվեին: Արդյունքում, ԱԱԾ-ն իրականացրել է իր նամակագրության եւ այլ հաղորդակցությունների ու խոսակցությունների ամբողջական վերահսկողություն:

118. Ավելին, 2006 թվականի օգոստոսի 15-ի դատական որոշման ազդոտ եւ անորոշ ձեւակերպումն ԱԱԾ-ին գործնականում անսահմանափակ իշխանություն էր տալիս ամբողջական վերահսկողություն սահմանելու իր՝ ներառյալ իր եւ իր կնոջ, մոր, երեխաների, այլ ազգականների, ընկերների, գործընկերների, համախոհների եւ իր անձնական, սոցիալական եւ մասնագիտական շրջապատի հետ ունեցած մնացած հաղորդումների եւ խոսակցությունների վրա: Մինչ այդ

նրան չէին տեղեկացրել վեցամսյա վերահսկողության ժամանակահատվածի ընթացքում հավաքագրված տվյալների ճակատագրի մասին: Այն փաստը, որ նախաքննության մարմինը տեղյակ էր, որ 2007 թվականի հունվարի 15-ին նա իր պաշտպանի միջոցով երկտող է փոխանցել նույն գործով մեղադրվող մյուս անձին, նույնպես ցույց է տալիս, որ քրեակատարողական հիմնարկում իր պաշտպանների հետ ունեցած իր բոլոր քննարկումները եղել են հսկողության իրական վտանգի տակ:

գ) Կառավարության պատասխանը

119. Ի պատասխան դիմումատուի դիտարկումներին՝ Կառավարությունը նշել է, որ դիմումատուի հաղորդակցությունների գաղտնի վերահսկումը կարգավորվել է ՔԴՕ-ի 281-րդ եւ 284-րդ հոդվածներով: Դիմումատուի՝ «Իրավական ակտերի մասին» օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի մեկնաբանությունը սխալ է, եւ ՔԴՕ-ի 281-րդ եւ 284-րդ հոդվածների կիրառումը պայմանավորված չի եղել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի ընդունմամբ: Այդ օրենքով պարզապես սահմանվելու էին օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, իսկ դա չի նշանակում, որ հետախուսային խոսակցությունների եւ այլ հաղորդումների գաղտնի վերահսկումը իրավական հիմքեր չունեն:

2. Դատարանի գնահատականը

ա) Արդյոք դիմումատուի անձնական կյանքի եւ նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքի նկատմամբ եղել է միջամտություն

120. Դատարանը նշում է, որ չի վիճարկվում այն, որ սույն գործով ԱԱԾ-ի կողմից իրականացված վերահսկումն իրենից ներկայացրել է դիմումատուի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավունքների նկատմամբ միջամտության: Գլխավոր խնդիրն այն է, թե արդյոք այդ միջամտությունը հիմնավորված է եղել 8-րդ հոդվածի 2-րդ կետով, մասնավորապես, արդյոք այն եղել է «օրենքին համապատասխան», հետապնդել է օրինական նպատակ եւ

«անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում»՝ այդ նպատակին հասնելու համար:

բ) Արդյոք միջամտությունը հիմնավորված է եղել

121. Դատարանն ուշադրություն է հրավիրում իր կողմից սահմանված նախադեպային իրավունքին, համաձայն որի՝ «օրենքին համապատասխան» արտահայտությամբ ոչ միայն պահանջվում է, որ վիճարկվող միջոցը որոշակի հիմքեր ունենա ներպետական օրենսդրությունում, այլ նաեւ այդ արտահայտությունը վերաբերում է տվյալ օրենքի որակին՝ պահանջելով, որ այն հասանելի լինի շահագրգիռ անձի համար եւ կանխատեսելի լինի իր հետեւանքների առումով (տե՛ս *Ամանն ընդդեմ Շվեյցարիայի* [ՄՊ] [*Amann v. Switzerland* [GC]], թիվ 27798/95, § 50, ՄԻԵԴ 2000-II, եւ *Ռոտարուն ընդդեմ Ռումինիայի* [ՄՊ] [*Rotaru v. Romania* [GC]], թիվ 28341/95, § 52, ՄԻԵԴ 2000-V):

122. Սույն գործով Դատարանը նշում է, որ դիմումատուի հեռախոսային խոսակցությունների գաղտնի վերահսկման թույլտվություն տալիս Համայնքների դատարանը հղում է կատարել ՔԴՕ-ի 281-րդ եւ 284-րդ հոդվածներին, որոնցով թույլատրվում է հեռախոսային խոսակցությունների գաղտնի վերահսկումը՝ որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում: Դիմումատուն պնդել է, որ ՔԴՕ-ի 281-րդ հոդվածը քննվող ժամանակահատվածում ուժի մեջ չի եղել, քանի որ դրա կիրառումը պայմանավորված է եղել մեկ այլ իրավական ակտի ընդունմամբ: Այս առումով Դատարանը վերահաստատում է, որ ներպետական իրավունքի մեկնաբանման եւ կիրառման հարցը ներպետական իշխանությունների, մասնավորապես՝ դատարանների, առաջնային պարտավորությունն է (տե՛ս *Կրուսլինն ընդդեմ Ֆրանսիայի* [*Kruslin v. France*], 1990 թվականի ապրիլի 24, § 29, շարք Ա, թիվ 176-Ա, եւ *Քոփն ընդդեմ Շվեյցարիայի* [*Kopp v. Switzerland*], 1998 թվականի մարտի 25, § 59, Զեկույցներ 1998-II): Հաշվի առնելով ասվածը եւ նկատի ունենալով վիճարկվող իրավական դրույթները՝ Դատարանը բավարար հիմքեր չի տեսնում դիմումատուի փաստարկների հետ համաձայնելու համար: Այսպիսով, Դատարանը համարում է, որ դիմումատուի

հեռախոսային խոսակցությունների գաղտնի վերահսկումը ներպետական օրենսդրության տեսանկյունից եղել է հիմնավորված: Դատարանը նաեւ համարում է, որ այդ իրավական դրույթների հասանելիության առումով ոչ մի խնդիր չի ծագում:

123. Ինչ վերաբերում է դրանց կանխատեսելիությանը, ապա Դատարանը վերահաստատում է, որ ոստիկանության հետաքննության նպատակներից բխող հաղորդակցության վերահսկման առանձնահատուկ համատեքստում՝ կանխատեսելիության պահանջը չի կարող նշանակել այն, որ որեւէ անհատ պետք է հնարավորություն ունենա կանխատեսելու, թե երբ են իշխանությունները վերահսկելու իր հաղորդակցությունը, որպեսզի ինքը կարողանա ըստ դրա համապատասխանեցնել իր վարքագիծը: Այնուամենայնիվ, օրենքի դրույթները պետք է լինեն բավականաչափ հստակ, որպեսզի քաղաքացիները պատշաճ տեղեկացվեն այն հանգամանքների եւ պայմանների մասին, որոնց պարագայում իշխանությունները լիազորված են դիմել անձնական կյանքը եւ նամակագրության գաղտնիությունը հարգելու իրավունքի նկատմամբ այս գաղտնի եւ վտանգավոր միջամտությանը (տե՛ս *Մալոնն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Malone v. The United Kingdom*], 1984 թվականի օգոստոսի 2, § 67, շարք Ա, թիվ 82):

124. Հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը եւ վերահսկման այլ ձևերը լուրջ միջամտություն են անձնական կյանքի եւ նամակագրության նկատմամբ եւ դրան համապատասխան պետք է հիմնված լինեն հատկապես հստակ «օրենքի» վրա: Կարելու է խնդրի վերաբերյալ ունենալ հստակ եւ մանրամասն կանոններ, հատկապես երբ կիրառման համար հասանելի տեխնոլոգիաները շարունակաբար կատարելագործվում են (տե՛ս *Քոփի* գործը՝ վերելում հիշատակված, § 72, եւ *Ամաննի* գործը՝ վերելում հիշատակված, § 56):

125. Վերահսկման գաղտնի միջոցառումների վերաբերյալ իր նախադեպային իրավունքում Դատարանը մշակել է հետեւյալ նվազագույն երաշխիքները, որոնք պետք է սահմանվեն օրենսդրությամբ՝ լիազորությունների չարաշահումներից խուսափելու նպատակով. հանցագործությունների բնույթը, որոնք կարող են

վերահսկման մասին որոշում կայացնելու հիմք հանդիսանալ, մարդկանց այն կատեգորիաների սահմանումը, որոնց հեռախոսները կարող են ենթակա լինել գաղտնալսման, հեռախոսների գաղտնալսման ժամանակահատվածի սահմանափակ լինելը, այն ընթացակարգը, որին պետք է հետևել ձեռք բերված տվյալների ուսումնասիրության, օգտագործման եւ պահպանման համար, նախագգուշական միջոցները, որոնք պետք է ձեռնարկել այդ տվյալներն այլ կողմերին տրամադրելու դեպքում եւ այն հանգամանքները, որոնց դեպքում ձայնագրությունները կարող են կամ պետք է ջնջվեն կամ ժապավենները՝ ոչնչացվեն (տե՛ս *Վեբերն ու Սարավիան ընդդեմ Գերմանիայի* (որոշում) [*Weber and Saravia v. Germany* (dec.)], թիվ 54934/00, § 95, ՄԻԵԴ 2006-XI, եւ *Եվրոպական ինտեգրման եւ մարդու իրավունքների ասոցիացիան եւ Եկիմժիևն ընդդեմ Բուլղարիայի* [*Association for European Integration and Human Rights and Ekimdzhiev v. Bulgaria*], թիվ 62540/00, § 76, 2007 թվականի հունիսի 28. *Լիբերթին եւ այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Liberty and Others v. the United Kingdom*], թիվ 58243/00, § 95, 2008 թվականի հուլիսի 1):

126. Ավելին, ներպետական օրենսդրությամբ պետք է սահմանվի պետական մարմինների կողմից 8-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքներին կամայական միջամտելու դեմ իրավական պաշտպանության միջոց: Մասնավորապես, այն դեպքում, երբ գործադիր իշխանությունն իրականացնում է գաղտնի գործունեություն, կամայականության ռիսկերն ակնհայտ են: Քանի որ հաղորդակցության գաղտնի վերահսկման միջոցառումների իրականացումը գործնականում բաց չէ շահագրգիռ անհատների կամ հանրության լայն զանգվածների կողմից ուսումնասիրության համար, ապա գործադիր իշխանությանը կամ դատավորին անսահմանափակ լիազորությամբ արտահայտվող իրավական հայեցողություն շնորհելը կհակասի իրավունքի գերակայությանը: Հետեւաբար օրենքը պետք է բավարար հստակությամբ սահմանի իրավասու մարմիններին տրամադրվող ցանկացած նման հայեցողության շրջանակը եւ դրա իրականացման եղանակը՝ հաշվի առնելով տվյալ միջոցառման օրինական նպատակը՝ անհատին կամայական

միջամտության դեմ համապատասխան պաշտպանություն տրամադրելու համար (տե՛ս *Կրուսլինի գործը*՝ վերելում հիշատակված, § 30, *Ամմանի գործը*՝ վերելում հիշատակված, § 56, եւ *Ռոտարուի գործը*՝ վերելում հիշատակված, §§ 55-56):

127. Հետեւաբար Դատարանը պետք է համոզված լինի, որ լիազորությունների չարաշահման դեմ գոյություն ունեն համարժեք եւ արդյունավետ երաշխիքներ: Նշվածի գնահատումը պայմանավորված է գործի բոլոր հանգամանքներով, ինչպիսիք են հնարավոր միջոցառումների բնույթը, շրջանակը եւ տեւողությունը, դրանց կիրառումը կարգադրելու համար պահանջվող հիմքերը, դրանց թույլատրման, իրականացման եւ վերահսկման համար իրավասու մարմինները, ինչպես նաեւ ազգային օրենսդրությամբ նախատեսված՝ իրավական պաշտպանության միջոցի տեսակը (տե՛ս *Քլասը եւ այլք ընդդեմ Գերմանիայի* [*Klass and Others v. Germany*], 1978 թվականի սեպտեմբերի 6, § 50, շարք Ա, թիվ 28, *Եվրոպական ինտեգրման եւ մարդու իրավունքների ասոցիացիան եւ Եկիմժիեն ընդդեմ Բուլղարիայի*՝ վերելում հիշատակված, § 77, եւ *Ուզունն ընդդեմ Գերմանիայի* [*Uzun v. German*], 35623/05, § 63, ՄԻԵԴ 2010 (քաղվածքներ)):

128. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանը նշում է, որ քննարկվող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ կամայական միջամտության դեմ ապահովված են եղել որոշ երաշխիքներ: Մասնավորապես, ՔԴՕ-ի 281-րդ եւ 284-րդ հոդվածներով հեռախոսային խոսակցությունների գաղտնի վերահսկման համար պահանջվում էր դատարանի թույլտվությունը: Ավելին, վերահսկումը կարող էր թույլատրվել միայն հիմքեր պարունակող գրավոր միջնորդության հիման վրա, որը կարող էր ներկայացվել բացառապես կոնկրետ ծառայությունների ղեկավարների կողմից: Միջնորդության մեջ պետք է հստակեցվեին այն տվյալները, որոնք նախատեսվում էր ստանալ, եւ վերահսկման իրականացման ժամկետը, ինչպես նաեւ միջնորդությանը պետք է կցվեին բոլոր այն նյութերը, որոնք հիմնավորում էին նման միջոցառման իրականացման անհրաժեշտությունը:

129. Չթերագնահատելով վերոհիշյալ երաշխիքների կարելիությունը՝ Դատարանը չի կարող չնկատել քննարկվող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության օրենքում առկա լուրջ թերությունները:

130. Մասնավորապես, օրենքով սահմանված չեն եղել ո՛չ իրավախախտումների տեսակները եւ ո՛չ էլ այն անձանց շրջանակը, որոնց դեպքում կարելի է թույլատրել գաղտնի վերահսկումը: Դրանով նաեւ չեն կոնկրետացվել այն հանգամանքները կամ հիմքերը, որոնց առկայության պայմաններում կարելի էր նման միջոցառման իրականացման որոշում կայացնել: Այս առումով հարկ է նշել, որ նման մանրամասնությունների բացակայությունը կարող էր հանգեցնել լուրջ հետեւանքների՝ հաշվի առնելով այն, որ սույն միջոցառման իրականացման թույլտվություն կարելի էր տալ [անգամ] ընթացող որեւէ քրեական վարույթի բացակայության պայմաններում:

131. Օրենքով նաեւ սահմանված չէր գաղտնի վերահսկման համար հստակ առավելագույն ժամկետ: Այսպիսով, չնայած այն բանին, որ գաղտնի վերահսկման իրականացում թույլատրող դատական որոշման գործողության ժամկետը սովորաբար սահմանափակվել է վեց ամսով, դատավորն ազատ է եղել կայացնելու այլ որոշում:

132. Ավելին, օրենքով սահմանված չէր միջոցառման իրականացման նկատմամբ պարբերական վերահսկողություն կամ դրա կիրառման նկատմամբ դատական կամ նմանատիպ այլ անկախ հսկողություն կամ տվյալներն ուսումնասիրելու, օգտագործելու, պահպանելու եւ ոչնչացնելու որեւէ կանոն: Ո՛չ էլ պահանջվում էր գաղտնի վերահսկումը դադարեցնելուց հետո ծանուցել այն անձին, ում նկատմամբ այն կիրառվել էր՝ այն դեպքերում, երբ նման ծանուցումն այլեւս չէր վտանգի գաղտնի վերահսկման նպատակը (այս կապակցությամբ տե՛ս, օրինակ, *Վեբերի ու Սարավիայի* գործը՝ վերելում հիշատակված, § 135, եւ *Եվրոպական ինտեգրման եւ մարդու իրավունքների ասոցիացիայի* գործը՝ վերելում հիշատակված, § 90):

133. Վերոնշյալը բավարար է Դատարանի համար՝ եզրակացնելու, որ

միջամտությունը «օրենքին համապատասխան» չի եղել՝ նկատի ունենալով, որ քննարկվող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության օրենքը չի պարունակել բավականաչափ հստակ եւ մանրամասն կանոններ ու չարաշահման դեմ չի ապահովել բավարար երաշխիքներ:

134. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ՝
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ՀԵՏ ԶՈՒԳԱԿՑՄԱՄԲ

135. Դիմումատուն նաեւ բողոքել է, որ իր նկատմամբ խտրականություն է դրսևորվել իր քաղաքացիության հիմքով, քանի որ դատարանները հիմնավորել են իր կալանքն այն հանգամանքով, որ ինքը օտարերկրյա քաղաքացի է: Նա վկայակոչել է 14-րդ հոդվածը, որի համաձայն՝

«[Սույն] Կոնվենցիայում շարադրված իրավունքներից եւ ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»:

Ընդունելիությունը

1. Կողմերի փաստարկները

136. Կառավարությունը նշել է, որ ներպետական դատարանները դիմումատուի կալանավորման մասին որոշում կայացնելիս եւ կալանքի ժամկետը երկարաձգելիս երբեւէ հիմք չեն ընդունել այն փաստը, որ դիմումատուն օտարերկրյա քաղաքացի է: Վերաքննիչ դատարանն այդ հիմքով առաջնորդվել է միայն գրավի դիմաց ազատ արձակելը մերժելու մասին որոշում կայացնելիս: Ցանկացած դեպքում, դիմումատուի նկատմամբ չի դրսևորվել խտրական վերաբերմունք, քանի որ նրա հետ նույն գործով մեղադրված անձի նկատմամբ, ով Հայաստանի քաղաքացի է, դրսևորվել է նույն վերաբերմունքը՝ վերցնելով նրան կալանքի տակ: Ավելին, դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ նա երբեք չի բարձրացրել այդ հարցը դատարաններում:

137. Դիմումատուն պնդել է, որ օտարերկրյա քաղաքացի լինելու հիմքով իր կալանավորումն իրենից ներկայացնում է խտրականություն՝ 14-րդ հոդվածի խախտմամբ:

2. Դատարանի գնահատականը

138. Դատարանն անհրաժեշտ չի համարում անդրադառնալ կողմերի բոլոր փաստարկներին՝ հետեւյալ պատճառներով:

139. Դատարանը վերահաստատում է, որ խտրականությունը տարբեր վերաբերմունքի դրսևորումն է համեմատաբար նույն իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ՝ առանց որեւէ օբյեկտիվ եւ ողջամիտ հիմնավորման (տե՛ս *Վիլիսն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Willis v. the United Kingdom*], թիվ 36042/97, § 48, ՄԻԵԴ 2002-IV): Ինչպես արդեն նշվել է վերելում, Վերաքննիչ դատարանը դիմումատուի փախուստի վտանգը հիմնավորելիս հղում է կատարել

նրա՝ օտարերկրյա պետության քաղաքացի լինելու փաստին: Ճիշտ է՝ դա միակ էական գործոնն է եղել, որը Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունել այդ վտանգը գնահատելիս: Այնուամենայնիվ, Դատարանը չի համարում, որ դա կատարվել է խտրական վերաբերմունքի հետեւանքով, այլ եղել է դիմումատուի դրությանն առնչվող էական բոլոր գործոններին չանդրադառնալու արդյունք՝ դրանով իսկ հանգեցնելով վատ պատճառաբանված որոշման ընդունման (տե՛ս վերելում՝ 90-92-րդ պարբերությունները):

140. Հետեւաբար գանգատի այս մասն ակնհայտ անհիմն է եւ պետք է մերժվի՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի եւ 4-րդ կետի համաձայն:

VI. ԿՈՆՎԵՆՅԱՅԻ ՄՅՈՒՍ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

141. Վերջապես, դիմումատուն ներկայացրել է մի շարք այլ բողոքներ՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերի եւ 10-րդ հոդվածի համաձայն:

142. Հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած բոլոր նյութերը, եւ այնքանով, որքանով այդ բողոքները գտնվում են իր իրավասության ներքո, Դատարանը գտնվում է, որ դրանցով չի բացահայտվում Կոնվենցիայով սահմանված իրավունքների եւ ազատությունների խախտման որեւէ հատկանիշ: Հետեւաբար գանգատի այդ մասը պետք է մերժվի ակնհայտ անհիմն լինելու հիմքով՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի համաձայն:

VII. ԿՈՆՎԵՆՅԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

143. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի

փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

144. Դիմումատուն պահանջել է 118 450 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

145. Կառավարությունը առարկել է այդ պահանջի դեմ:

146. Դատարանը համարում է, որ հայտնաբերված խախտումների հետեւանքով դիմումատուն անկասկած կրել է ոչ նյութական վնաս, եւ որոշում է նրան շնորհել 6 000 եվրո՝ որպես այդ վնասի հատուցում:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

147. Դիմումատուն նաեւ պահանջել է 24 800 ՀՀ դրամ՝ որպես հատուցում Դատարանում կրած ծախսերի եւ ծախքերի համար, մասնավորապես՝ փոստային ծառայության ծախսերի համար:

148. Կառավարությունը նշել է, որ դիմումատուի կողմից FedEx թանկարժեք փոստային ծառայությունից օգտվելու ոչ մի անհրաժեշտություն չի եղել: Նա կարող էր օգտվել «Հայփոստ» ընկերության շատ ավելի էժան ծառայություններից:

149. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի փոխհատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվում է, որ դրանք իրականում կատարվել են, անհրաժեշտ են եղել, եւ դրանց չափը եղել է ողջամիտ: Սույն գործի շրջանակներում հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը եւ վերը նշված չափորոշիչները՝ Դատարանը ողջամիտ է համարում շնորհել 55 եվրո գումար՝ որպես ծախսերի ու ծախքերի հատուցում:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

150. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. *Հայտարարում է* 2007 թվականի հունիսի 10-ից մինչև 22-ը դիմումատուի կալանավորման ենթադրյալ անօրինականության, նրան կալանքի տակ պահելը շարունակելու պատճառների ենթադրյալ բացակայության, 2007 թվականի փետրվարի 7-ի կալանքի հարցով լսումների ընթացքում մրցակցային դատավարություն եւ կողմերի իրավահավասարություն չապահովելու եւ դիմումատուի հեռախոսային խոսակցությունների գաղտնի վերահսկման վերաբերյալ բողոքն ընդունելի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ եւ 4-րդ կետերի եւ 8-րդ հոդվածի համաձայն, իսկ գանգատը մնացած մասով՝ անընդունելի:

2. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 2007 թվականի հունիսի 10-ից մինչև 22-ը դիմումատուին կալանքի տակ պահելու համար իրավական հիմք չլինելու առնչությամբ:

3. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում՝ հաշվի առնելով այն փաստը, որ դիմումատուին կալանքի տակ պահելը շարունակելու համար վերաբերելի եւ բավարար պատճառներ չեն ներկայացվել:

4. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում՝ 2007 թվականի փետրվարի 7-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում վարույթը մրցակցային չլինելու եւ կողմերի իրավահավասարությունը չապահովելու առնչությամբ:

5. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

6. Վճռում է, որ՝

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի հետեյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 6 000 եվրո (վեց հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.

ii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 55 եվրո (հիսունհինգ եվրո)՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

7. Մերժում է դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2012 թվականի հոկտեմբերի 2-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Սանտիագո Կեսադա

Ջուսեփ Կասադեյա

Քարտուղար

Նախագահ